



Մամուլի հաղորդագրություն
14. 03. 2019 թ.

Անգլերենի անվճար դասընթաց մարզաբնակ երիտասարդների համար

Մարզերում բնակվող 17-35 տարեկան երիտասարդները հրավիրվում են մասնակցելու **անգլերենի առցանց անվճար դասընթացի**:

Ծրագիրն իրականացնում է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ:

Դասընթացը նախատեսված է բազային գիտելիքներ ունեցողների համար (A2) համար: Մրցութային կարգով ընտրված մասնակիցները ծրագրի ավարտին կտիրապետեն Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR) սանդղակի

B1 մակարդակի անգլերենին: Դասընթացը կտևի 24 շաբաթ՝ ներառյալ շաբաթական երկու առցանց (online) դաս՝ 1.5 ժամ տևողությամբ և չորս դեմ առ դեմ հանդիպում ողջ դասընթացի համար (հանդիպումները կկազմակերպվեն մասնակցի բնակության վայրին մոտ տեղանքում):

Մասնակցության համար անհրաժեշտ է ունենալ համակարգիչ և ինտերնետ կապ: Դասընթացի ավարտին մասնակիցներին կտրվեն վկայականներ:

Հետաքրքրված անձինք կարող են լրացնել **առցանց հայտը** հետևյալ հղմամբ՝ <https://goo.gl/forms/8HnRoUpu0zqqDVB32> : Դիմումների վերջնաժամկետը **մարտի 29-ն** է:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը՝ հատկապես կենտրոնանալով երեխաների և երիտասարդների կարողությունների զարգացման վրա: ՔՈԱՖ-ի ուշադրության ծիրում կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերն են: Հիմնադրամի ծրագրերն սկսել են իրագործվել 2004 թվականին մեկ գյուղից և ընդլայնվել դեպի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Չեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 (քառասունչորս) գյուղական համայնքներ:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#)։ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը։ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում։

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին և հասանելի է լինելու մարզի շուրջ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) բնակիչներին։